Զբաղոած լինելով խօսակցութեամբ, մենք բաւական ետ էինք մնացել: Ասլանը շատ առաջ էր գնացել: Ես խնդրեցի իմ խօսակցին, որ փոքր-ինչ շտապեցնէ իր ձին: Բայց նա, երեւի, չլսեց իմ խնդիրքը, թէեւ քանիցս կրկնեցի: Նրա բոցավառ աչքերը թափառում էին Տարօնի ընդարձակ դաշտավայրի վրայ, կարծես մի բան որոնում էին այնտեղ: Նրա դէմքը սաստիկ գունատոած էր, եւ շրթունքները պինդ սեղմոած էին միմեանց վրայ: Նա մինչեւ անգամ մոռացաւ իմ ներկայութիւնը եւ սկսեց ինքն իրան խօսել:

«Տարո՞ն, սիրելի աշխարհ, որքա՞ն ազգեր եկել, անցել են քո վրայով, որքանի՞ն հիւրասիրել ես դու եւ քո ամրութիւնների մէջ պատսպարան ես շնորհել: Քո մէջ ապաստան գտան ասորոց Սենեքերիմ թագաւորի երկու որդիքը՝ Ադրամելէք եւ Սանասար՝ հայրասպան որդիքը բերեցին իրանց հետ ե՛ւ իրանց աստոածներին, ե՛ւ իրանց ծառաներին: Բայց դու օտար հիւրերին սիրեցիր, բայց օտար աստոածներին համբերել չկարողացար: Հայութեան դրոշմը դրեցիր քո հիւրերի վրայ եւ նրանցից սկսեցաւ Արծրունեաց հզօր նախարարութիւնը: Քո մէջ ապաստան գտաւ ճենացի իշխանազն Մամգունը: Իր թագաւորի սրտմտութիւնից փախստական լինելով, դիմեց քո պաշտպանութեանը: Նա էլ բերեց իր հետ իր կրօնը, իր պաշտամունքը, իր սովորութիւնները: Բայց դու նրան եւս հայեացրիր, եւ նրանից սկսոեցաւ Մամիկոնեան մեծ նախարարութիւնը: Քո մէջ ապաստան գտան հնդկացի իշխանազն եղբայրները՝ Դեմետր եւ Գիսէ: Նրանք եւս, իրանց թագաւորի բարկութիւնից ազատելու համար դիմեցին քո մեծահոգութեանը, իրանց հետ բերելով եւ մի ստոար գաղթականութիւն: Դու նրանց բնակութեան տեղ շնորհեցիր, հիմնեցին Վիշապ քաղաքը եւ Քարքէ լեռան բարձրութիւնների վրայ կանգնեցրին իրանց տաճարները: Այդ տաճարներից, Լուսաւորչի հետ պատերազմելու ժամանակ, դուրս եկան 6.946 մարդիկ, որոնց մեծ մասը քուրմեր էին: Բայց դու բոլորին հայեացրիր, եւ սեւամորթ հնդիկը կլանոեցաւ քո բնիկ ժողովրդի մէջ: Այդպէս, դարերի ընթացքում, ոտք կոխեցին քո նոիրական հողի վրայ մեծ մարդիկ՝ մեծ ուժերով: Բայց ամէնքը լուծոեցան, ամէնքը միախառնոեցան քո հարազատ զաւակների հետ: Այժմ, սիրելի՛ Տարօն, քո դաշտերի վրայ թափառում է մի մարդ՝ սեւ հագուստով եւ սեւ սրտով: Նա նոյնպէս փախստական է եղել իր երկրից, նա նոյնպէս արտաքսոել է ր երկրից, եւ քո գրկում հիւրասիրութիւն է որոնում: Նրա հայրենիքը չկարողացաւ մարսել նրան, եւ իր միջից դուրս վիժեց: Նա դիմեց անծանօթ երկիր, որ անծանօթ ժողովրդի մէջ ծածկոիլ կարողանայ: Նա չէ բերել իր հետ զէնք, չէ բերել եւ մեծ ուժեր: Նրա գլխաւոր զէնքը, իր գրպանում լցրած, փոքրիկ պղնձէ